

ք. Երևան

« 17 » 11 2022թ.

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Մ. Քալաշյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սենտրուլ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Արեն Զաքարյանի-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3457020 (երեք միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնան-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Պայմանագիրը կնքվում է առավելագույն գնով և առավելագույն քանակությունների համար և Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատակարարված ապրանքի դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը պահանջ չներկայացվելու դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պասշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 16
Հայրիգնեսքանկ ՓԲԸ
Հ/Հ 1150008842500100
ՀՎՀՀ 00009381

Տնօրենի ժ/պ՝



Մ. Քալաշյան

ՎԱՃԱՌՈՂ

«Սենտրալ» ՍՊԸ
ք. Երևան, Եղվարդի 108
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570053215080100
ՀՎՀՀ 00154817

Տնօրեն

Ա. Չարսրյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Ձ/ի	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (ԸԲՎ)	Անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր առավելագույն քանակը	Մտակարարում	
									Հասցեն	Ենթակա առանձի պահպանումը
1	34331300/253	Ատամնա վոր փոկ	ГАЗ Горьковский автомобильный завод	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Ատամնավոր փոկ	հատ	11400	57000	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
2	34331300/254	Ատամնա վոր փոկ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոպյակը - Ատամնավոր փոկ	հատ	21000	63000	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
9	34331300/257	Հովացուցիչի տվիչ	ГАЗ Горьковский автомобильный завод	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Հովացուցիչի տվիչ	հատ	1440	7200	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
10	34331300/258	Հովացուցիչի տվիչ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոպյակը - Հովացուցիչի տվիչ	հատ	11400	34200	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

11	34331300/259	Գնդերող ակազ (կոմպլեկ տ)	ГАЗ Горьковский автомобильный завод	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Գնդերողակազ (կոմպլեկտ)	հատ	13200	66000	5	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
12	34331300/260	Գնդերող ակազ (կոմպլեկ տ)	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոյակեր - Գնդերողակազ (կոմպլեկտ)	հատ	11400	34200	3	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:	
13	34331300/261	Զգածողի ձայրակալ (կոմպլեկ տ)	ГАЗ Горьковский автомобильный завод	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Զգածողի ձայրակալ (կոմպլեկտ)	հատ	9750	48750	5	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:	
14	34331300/262	Զգածողի ձայրակալ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոյակեր - Զգածողի ձայրակալ (կոմպլեկտ)	հատ	9900	29700	3	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:	
15	3431140/22	Շարժիչի բարձրիկ	ГАЗ Горьковский автомобильный завод	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 -	հատ	1800	9000	5	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:	
16	3431140/23	Շարժիչի բարձրիկ	ГАЗ	Գազ 3102 կոյակեր -	հատ	1740	5220	3	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20	

17	34331300/263	Դիսկ, պիտա, վիժվելու (կոմպլեկտ)	Горьковский автомобильный завод	ГАЗ	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Դիսկ, պիտա, վիժվելու (կոմպլեկտ)	հատ	25200	126000	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
18	34331300/264	Դիսկ, պիտա, վիժվելու (կոմպլեկտ)	Горьковский автомобильный завод	ГАЗ	Գազ 3102 կոպիտը - Դիսկ, պիտա, վիժվելու (կոմպլեկտ)	հատ	53400	160200	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
19	34331300/265	Կցորդն և զվառվող գլան	Горьковский автомобильный завод	ГАЗ	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Կցորդն և զվառվող գլան	հատ	5700	28500	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
20	34331300/266	Կցորդն և զվառվող գլան	Горьковский автомобильный завод	ГАЗ	Գազ 3102 կոպիտը - Կցորդն և զվառվող գլան	հատ	5700	17100	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
23	34331300/269	Կցորդն և ռետին խողովակ 105	Горьковский автомобильный завод	ГАЗ	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Կցորդն և ռետին խողովակ 105	հատ	1500	7500	5	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

25	34331300/271	Վարոցքի լար մուշտուկով և կոմպլեկտ	ГАЗ Горьковский автомобильный завод	Վարոցքի լար մուշտուկով և կոմպլեկտ	6000	30000	5	Ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
26	34331300/272	Վարոցքի լար մուշտուկով և կոմպլեկտ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոլայսեր - Վարոցքի լար մուշտուկով (կոմպլեկտ)	14400	43200	3	Ք.Երևան, Լենինգրադյա ն 16	3	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
27	34331300/273	Վարոցքի կոճ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոլայսեր - Վարոցքի կոճ	4710	23550	5	Ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
28	34331300/274	Վարոցքի կոճ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոլայսեր - Վարոցքի կոճ	32400	97200	3	Ք.Երևան, Լենինգրադյա ն 16	3	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
29	34331300/275	Ջրի ընդարձակ կլան տարա ռասշիրի տել	ГАЗ Горьковский автомобильный завод	Ջրի ընդարձակ կլան տարա ռասշիրի տել	1800	9000	5	Ք.Երևան, Լենինգրադյա ն 16	5	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

30	34331300/276	Ջրի ընդարձակման տարածաշրջանի տեղ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոայսեր - Ջրի ընդարձակման տարածաշրջանում	հատ	3000	9000	3	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
32	34331300/278	Ջրի ընդարձակման տարածաշրջանի կախարիչ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոայսեր - Ջրի ընդարձակման տարածաշրջանում կախարիչ	հատ	4200	12600	3	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
34	42121190/3	Ջրի պոմպ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոայսեր - Ջրի պոմպ	հատ	27000	81000	3	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
36	34331300/280	Գններատու	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոայսեր - Գններատու	հատ	132000	396000	3	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
38	34331300/282	Մեկնարկիչ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոայսեր - Մեկնարկիչ	հատ	94200	282600	3	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	3	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
39	35121290/5	Օդի տվիչ	ГАЗ	ԳԱԶ-3102 (406), Գազ 31105 - Օդի տվիչ	հատ	24000	120000	5	Ք.Երևան, Լենինգրադյան ն 16	5	Պայմանագիր կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

40	35121290/6	Օրի տվիչ	ГАЗ Горьковский автомобильный завод	Գազ 3102 կոռայվեր - Օրի տվիչ	հատ	27000	81000	3	ք.Երևան, Լենինգրադյա ն 16	3	Պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:
